





S E R O F N A K U N
U Q O M R Q

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո.

Եկեսցէ արքայութիւն քո.

Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի.

զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր.

Եւ թող մեզ զպարտիս մեր.

Որպէս եւ մեր թողումք մերոց պարտապանաց,

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,

այլ փրկեա զմեզ ի չարէն.

զի քո է արքայութիւն եւ զօրութիւն

Եւ փառք յալիտեանս. ամէն:



S E R O F N A K U N U Q O M R Q

Մեր ՀԱՅՐ, որ երկնքում ես, սուրբ լինի Քո անունը,
Ծո բառակերպութիւն օս. Ծո խանճ տինի երկի մոս

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ

«ՀԱՅՐ ՄԵՐԻ»-Ի

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Այն խոսքի մասին, որ ասում է.
«Երբ աղոթեք, ասեք. Հայր մեր, որ երկնքում ես,
թող սուրբ լինի Քո անունը»
Մատթեոս 6.9

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ

«ԳԻՐՁ ՔԱՐՈՉՈՒԹՅԱՆ, ՈՐ ԿՈՉԻ ԶՄԵՌԱՆ ՀԱՏՈՐ»,

Կ. Պոլիս, 1740 թ., էջ 309-314

«ՀԱՅՐ ՄԵՐ» ԱՂՈԹՁԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԱՍԵԼ Է

ԱԲՐԱՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԿՐՏՉՅԱՆԸ

Գիրքն առաջին անգամ լույս է տեսել «Սոմիկ»

մշակույթային միության կողմից 1992թ.

Գրաբար ու աշխարհաբար՝

Հայր Աբրահամի ընդարձակ ներածականով

Շապիկի նկարը՝ Լիլիա Ռատների

Գլխավոր Խմբագիր՝ Համլետ Զաքարյան



Գրույկը տպագրության է պատրաստվել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Այն խոսքի մասին, որ ասում է. «Երբ աղոթեք, ասեք. Հայր մեր, որ
երկնքում ես, քող սուրբ լինի Քո անունը...»

Մատթեոս 6.9

Վարդապետներն ասում են, թե այս աղոթքը շատ պատվական
ու գովելի է երեք պատճառով.

Նախ - Որովհետև Քրիստոսի կողմից է սահմանված: Եվ եթե այն
աղոթքները, որ մարդիկ են սահմանել, պետք է սովորել ու աղոթել,
ապա որքա՞ն առավել պետք է սովորել այն աղոթքը, որն Աստված
իր բերանով ուսուցանեց:

Երկրորդ - Որովհետև կարծ է ու գեղեցիկ, և ոչ ոք չի կարող չսո-
վորել՝ պատճառ բերելով երկարությունը:

Երրորդ - Որովհետև անհրաժեշտ է՝ բարեկեր: Քանի որ այն
ամենը, ինչ պետք է մեզ՝ թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր, այս աղոթ-
քով խնդրված է լինում:

Իսկ խնդրվածն ընդունելի չի լինում երեք պատճառով.

Առաջին - Երբ լինում է առանց գովարանության:

Երկրորդ - Երբ լինում է անկարգ:

Երրորդ - Երբ պատշաճից ավելի է լինում:

Դրա համար Քրիստոսը երեք բան սովորեցրեց մեզ.

Նախ - Որ խնդրելուց առաջ քաղցրությամբ ու գովարանությամբ
փառավորենք Աստծուն, ինչպես նրանք, ովքեր, թագավորներից
ունեցվածք են խնդրում, նախ գրվում ու փառավորում են նրանց,
որպեսզի քաղցրանա նրանց սիրութ, և ապա խնդրում են ինչ որ

Երբորդ - Մեզ ուսուցանեց պատշաճից ավելի շխնդրել՝ ասելով.
«Մեր հանապազօրյա հացը տուր», որովհետև միայն հաց խնդրելը
ավելին չէ:

Իսկ այս գովարձնությունը եռակի է, այսինքն՝ իմաստության,
գութի ու զորության համար: Որովհետև երբ ասում ենք Հայր, ցույց
է տալիս իմաստությունը, որ հնագոյն է ու հավիտենական՝ ըստ
Դամիելի, քանի որ ավելորդությունը իմաստություն է, ասում է Սորո-
մննը: Իսկ երբ ասում ենք մեր, ցույց է տալիս Նրա գութը, որ շարժում
ենք մեր հանդեպ: Եվ ասելով երկնքում՝ Նրա զորությունն ենք
հայտնի դարձնում: Քանզի ինչ էլ խնդրենք, Նա իմաստուն է, զիտի
տալ, և քանի որ գրառատ է, կամենում է տալ, և քանի որ զորավոր
է, կարող է տալ: Դրա համար մեզ ուսուցանեց ասել՝ «Հայր մեր, որ
երկնքում ես»:

Իսկ թե ինչու հրամայեց ասել Հայր մեր և ոչ թե Հայր իմ, սրա
համար վարդապետները չորս պատճառ են ասում.

Նախ - Որովհետև միայն Քրիստոսն է քնությամբ Աստծո Որդի,
իսկ մենք՝ շնորհատրությամբ, ինչպես ասում է. «Ես բարձրանում
եմ իմ Հոր մոտ՝ քնությամբ, և ձեր Հոր մոտ՝ շնորհատրությամբ»:

Երկրորդ - Որպեսզի հայտնի լինի, թե որուել մեկը չպետքէ աղորի
միայն իր համար, այլ՝ բոլոր հավատացյալների, որպեսզի երևա
բոլոր քրիստոնյաների միությունը: Իսկ այն աղոքքը, որ ընդհանուր
է, առավել լսելի է լինում:

Երբորդ - Որովհետև Աստված առատաձեռն է, և Նրա կամքին
համեյի է բարիք պարզեցնել շատերին, քան թե մեկ մարդու:

բայց Աստված հատկապես Հայր է կոչվում քրիստոնյաների համար:
Եվ սա չորս պատճառով, որովհետև Որդին Հորից չորս բան ունի.

Նախ - Գոյությունը:

Երկրորդ - Ուսումն ու իմաստությունը:

Երրորդ - Սնունդն ու կերակուրը:

Չորրորդ - Ժառանգությունն ու ող Հայրականը:

Եվ ճշնարիտ հավատացյալմերն այս չորս տեսակի պարզեցները
ստացել են Տիրոջից, որ նրանց Հայրն է.

Նախ - Որովհետև Նրանից ենք ստացել գոյությունը, քանի որ
մկրտության ավազանով Նրանից ծնվեցինք հոգևոր կյանքով, ըստ
այնմ՝ «Ովքեր Քրիստոսով մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվե-
ցիք» (Գաղատացիս 3.27): Նաև որ անոն առանք, որովհետև
Քրիստոսով քրիստոնյաներ կոչվեցինք:

Երկրորդ - Ստացանք ուսումը և իմաստությունը, որովհետև ուսու-
ցանեց մեզ օրենքներով ու Ավետարանով, ըստ այնմ՝ «Ձեզ ուսուցիչ
մի՛ որոնեք, որովհետև ձեր ուսուցիչը Քրիստոս է» (Մատթեոս 23.8):

Երրորդ - Որովհետև Նրանից ենք ստանում սնունդ ու կերա-
կուր, քանզի Նա է մեզ սնուցանում խորհուրդներով ու եկեղեցական
աստիճաններով, նաև Իր մարմնով ու արյամբ, ըստ այնմ՝ «Առե՛ք,
կերե՛ք, այս է իմ մարմինը» (Մատթեոս 26.6):

Չորրորդ - Որովհետև Նրանից Ժառանգելու ենք երկնքի արքա-
յությունը, ինչպես ասում է առաքյալը. «Ծառա չես, այլ՝ որդի, և եթե
որդի ես, ապա և՝ Ժառանգակից Քրիստոսի»:

Անհավատներն այս չորս բաները չեն ստանում Աստծուց, որի
կամ առաջ կամ առաջ կամ առաջ կամ առաջ կամ առաջ կամ առաջ կամ

Երբորդ - Երբ ասում ենք Հայր մեր, որ երկնքում ես, պետք չէ երկրավոր բան խնդրենք, այլ երկնավորը, ինչպես առաջյալն է ասում. «Վերինը խնդրեք, ուր Քրիստոս է նստում Աստծո աջ կողմում» (Կողոսացիս 3.1): Եվ Դավիթը, որ ըղձալով ասում էր. «Ես ընդհանրապես ի՞նչ ունեմ երկնքում, կամ Քեզնից էլ ի՞նչ խնդրեմ երկրի վրա» (Սաղմոս 73.25), «Իմ սրտի Աստված, իմ բաժին Աստված հավիտյան» (Սաղմոս 73.26), ցոյց է տախիս, թե երբ երկնքում իմ բաժինը Աստված է, ապա երկրավորներից էլ ի՞նչ պետք է խնդրել:

Չորրորդ - Որովհետև երբ Աստծուն Հայր ենք կոչում, պարտավոր ենք բարությամբ ու սրբությամբ Նրա հարազատ որդին լինել, և ոչ թե շարությամբ ու մեղրով՝ խոր որդին: Որովհետև ում նմանությունը որ ունենք, նրան ենք մեզ հայր անվանում՝ կամ Աստծուն, և կամ Սատանային: Եվ իմացի՛ր, ո՛վ մարդ, որ թող քո մեջ չլինի որևէ տեսակի մեղք կամ շարիք ու Սատանայի որդիություն, քանի որ Աստծուն մեղքի ու շարիքի հայր ես անվանում, որ աններելի է: Ուրեմն եթե քո հայրը անդունդների մեջ է, դու ինչպե՞ս ես դեպի երկինք կանչում, կամ ինչպե՞ս ես երկինքը բարձրացնում, որովհետև նա այնտեղից անդառնալիորեն զրկվեց: Որովհետև եթե այսպիսին ես և ասում ես Հայր մեր, որ երկնքում ես, նման չես բարի Հորը, այլ նրան, որին շարիքներով նմանվեցիր: Սարսափելի ու մնձ մեղք ես գործում ըստ տաս եղանակի.

Նախ - Որովհետև Սատանան չունի բարի Հոր կերպարանքը: Եվ եթե մեր ես ասում, պարզ է, որ Աստծուն քո չարիքների հայր ես անվանում, որ բացահայտ արհամարհանք է, անեծք ու աններելի մեղք:

Չորրորդ - Որ ասում ես Թող գա արքայությունը: Սա նույնպես սարսափելի չարություն է, քանի որ նա, որի իշխանությունը Քրիստոս խաչով կործանեց՝ ասելով. «Այս աշխարհի իշխանը թող դուրս նետվի» (Հովհաննես 12.31), դատապարտված է, իսկ դու մշտապես աղոթում ես հակառակ Քրիստոսի. «Թող գա քո արքայությունը և քո իշխանությունը»:

Հինգերորդ - Որ ասում ես Թող լինի քո կամքը ինչպես երկնքում, այնպես էլ երկրում: Սա դառնագոյն չարություն է, որովհետև նա մարդկության կորուստն է կամենում, քանի որ երկնքում չար կամքով հրեշտակներին ինքն իր ետևից քաշեց և դարձրեց դևեր ու Աստծուն հակառակ: Իսկ դու աղոթում ես նրա անվանակցին երկրում էլ նույնը անել, այսինքն՝ մարդկանց իր ետևից դժոխք քարշ տալ, իսկ սա Աստծո կամքին հակառակ է, որովհետև Աստված չի կամենում մեղավորի մահը, այլ չար ճանապարհից նրա դառնալն ու փրկվելը, ինչպես ասում է մարզարեն: Կամ երկինքը՝ դրախտն է նշանակում, որովհետև ասում ես, ինչպես այնտեղ մեր նախնիներին կորստյան մատնեցիր, այնպես էլ այժմ այստեղ արա:

Վեցերորդ - Որ ասում ես Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր: Սա նույնպես մեռք է, որովհետև Սատանան ոչինչ չունի, որպեսզի որևէ մեկին կերակրի, ինչպես անառակ որդուց հայտնի է, որ ասում էք. «Ես այստեղ սովամահ կորչում եմ» (Ղուկաս 15.17): Դու ի՞նչ ես խնդրում, մեղքերի ու չարիքների շատությունն ու աշխարհի հեշտանքները. մեղսասերները սովով են կերակրվում, իսկ սրբերը՝ Աստծո Խոսքի հացով: Չո արածն առավել կորստարեր ու չար է:

Ութերորդ - Որ ասում ես Սի տանիք մեզ փորձության: Իսկ սա մեծ հիմարություն է, որովհետև նրանից, որ չար փորձությունների մայրն է և բոլորին փորձանքի և մատնում, որպեսզի օտարանան Աստծուց, ազատվել ես խնդրում հենց իրենից, քանի որ երբ կույրը կույրին է առաջնորդում, սխալվում և խորխորատն է ընկնում:

Իններորդ - Որ ասում ես փրկիր չարից: Սա առավել տգիտություն է՝ խավարից լոյս խնդրել, մահկանից՝ կյանք, և ապականությունից՝ անապականություն, նույնապես և չարից բարի խնդրել, փրկություն, որն, անկասկած, հակասություն է:

Տասներորդ - Որ ասում ես Քոնն է արքայությունը, և գորությունը և հավիտենական փառքը: Սա ուրիշ ոչ ոքի չի պատշաճում, բացի Աստծուց: Իսկ դու զրկում ես Աստծուն և տալիս ես դեերին, ինչպես անօրեն կռապաշտները, որովհետև նա արքայություն չունի, քանի որ ընկել է իր բնակության վայրից և դատարկ է բոլոր բարություններից և գորություն չունի, քանի որ տկար աղջկներից ոյուրավ պարտվեց և պարտվում է, փառք էլ չունի, այլ՝ հավիտենական տանջանք:

Եվ տե՛ս, որ այս խոսքը գեղեցիկ կարգ ունի, որովհետև հոգևոր բարությունները, որ խնդրում ենք Աստծուց, երեք տեսակ են.

Նախ - Աստծո անկան գոյությունն ու փառքը, երբ ասում ենք Թող սուրբ լինի քո անունը:

Երկրորդ - Եվ երկնքի արքայությունը, ասելով Թող գա Քո արքայությունը:

Երրորդ- Որպեսզի կատարելավես հնազանդ լինենք Աստծուն

Աստված, և այն պետք է սուրբ լինի, որպեսզի Նա չբարկանա մեզ վրա, ինչպես որ թագավորները, երբ տեսնում են դարայասի սեմն ու դուռը աղտեղված, գարշելով չեն մտնում, այլ պատժում են սպասավորներին:

Երկրորդ - Թող սուրբ լինի Քո անունը, այսինքն՝ ինչպես Քո անունը սուրբ է Չո կողմից, այնպես էլ մեր կողմից թող սուրբ լինի: Այսինքն՝ այնպիսի վարդով ապրենք, որ տեսնեն մեր բարի գործերը և փառավորեն Քեզ՝ մեր Հորը, որ երկնքում ես, և ոչ թե Քո անունը մեր պատճառով հայիոյի հերանուսների մեջ:

Երրորդ - Թող սուրբ լինի Քո անունը, մի այլ թարգմանության մեջ այսպես է՝ «Թող հաստատ լինի»: Այսինքն՝ Քո անունը թող հաստատ լինի քրիստոնյաների վրա, որպեսզի չկորցնեն այն, քանի որ շատերը կորցրեցին, ինչպես ուրացողներն ու անհավատները, օրինակ՝ Հովհանոսը և ուրիշները:

Չորրորդ - Թող Քո անունվ սուրբ լինեն քրիստոնյաները կամ աստվածացները, ըստ այնմ՝ «Որպես Աստված գալիս ես աստվածացների մեջ, և ոչ թե ինչպես անսուրբներն ու չարահամբավները»:

Հինգերորդ - Թող սուրբ լինի, այսինքն՝ սրով հանդերձ թող լինի Քո անունը, որ բոլոր երկասարի սրերից հասու է՝ հոտած անդամները կտրելու համար, այլև որորուն հորից, և դատերը՝ մորից, ու անուսուն՝ կնոցից անջատելու և այլն, այլ նաև մեղեքն ու չարությունները մեր հոգիներից հեռացնեն, մանավանդ առ ի սարասի դևերի և ի հերքումն չար պիտերի:

Վեցերորդ - Թող սուրբ լինի Քո անունը, այսինքն՝ ամեն ինչ Քո

Երկրորդ - Ինչպես որ տիրում ես Քեզ հավատացող քրիստոնյաներին, այսպես էլ տիրես անհավատներին, որպեսզի հավատան Քեզ և ծառայեն:

Երրորդ - Ինչպես տիրում ես հեթանոսներին, որոնք Քեզ հավատացին, այնպես էլ տիրես հրեաներին՝ աշխարհի վախճանին, ըստ այն խոսքի, թե «Երբ հեթանոսների ժամանակը լրանա, և ապա ողջ Իսրայելը կփրկվի» (Հոռմեացիս 11.25), և թե՝ «Նրա առջև են խոնարհվում բոլոր ծնկներն ու բոլոր լեզուները» (Եսայի 45.23, Հոռմեացիս 14.11):

Չորրորդ - Այս ասում են մարտիրոսներն ու ճգնավորները, քանի որ կարուտ են հատուցմանն ու պսակներին, դրա համար են աղորում, որպեսզի շուտով գա փոխհատուցման օրը:

Հինգերորդ - Որովհետև շատերը կան, որ հոգ չեն տանում և չեն խնդրում երկնքի արքայությունը, այլ անցավոր կյանք են խնդրում ու երբեք չեն հագիտում: Եվ այնպես ծարավի են մեղքերի, որ խնդրում են, թե՝ բող գա մեղքի աղտեղությունը: Իսկ մենք՝ արքայություն ցանկացողներս, նրանց հակառակ ասում ենք՝ «Թող գա Զո արքայությունը»:

Վեցերորդ - Այս խոսքը մեր մարդկային բնության կողմից մարդացած Բանին է ուրդված խնդրանքով ու բախսանձանքով, թե՝ «Ժող զա արքայությունը»՝ դատելու մեզ, որ բնութենակից ու մարմնակից ես մեզ և գիտես մեր բնության տկարությունը, որպեսզի ողորմությամբ դատես, ինչպես ասում է առաքյալը. «Ինքը փորձվեց, կարող է և փորձվողներին էլ օգնել» (Եբրայեցիս 2.18): Եվ այս

ՍԱ ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽՆ Է

Արի տեսնենք հոգու երրորդ բարությունը:

«Թող քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»:

Այս խոսքը բազում մոտեցումներ ունի և մեծ է նրա գորությունը.

Նախ - մե՛տե՛ ինչպես որ հրեշտակներն ու սրբերը, որոնք Քեզ մոտ են, քո կամքն են կատարում, այնպես էլ մարդիկ, որ երկրի վրա են, թող բողնեն իրենց կամքը և կատարեն քո կամքը:

Երկրորդ - Աստծո կամքը մեղավորների դարձն է և հոգիների փրկությունը՝ մեղքի ու չարիքի բռնությունից, ինչպես ասում էր մարգարեի միջոցով.

«Զեմ կամենում մեղավորների մահը, այլ նրանց դարձը չար ճանապարհից ու ապրելը, որպեսզի ապրեն և ճշմարտության զիտակցության գան» (Ա Տիմոթեոս 2.4):

Որի համար պարտավոր ենք Աստծու կամքը կատարել:

Երրորդ - Որովհետև Աստծո կամքն է, որ մենք՝ անդամներս, զիլիս հետ միավորվենք, ինչպես ասում էր Հորը. «Կամենում եմ, որ ուր ես եմ, նրանք էլ ինձ հետ լինեն, ինչպես Դու, Հայր, իմ մեջ ես, և ես՝ քո մեջ, որպեսզի սրանք էլ մեր մեջ լինեն, որպեսզի մեկի մեջ կատարյալ լինեն» (Հովհաննես 17.24): Որի համար միշտ աղաչում ենք Աստծուն այս կամքի կատարումը:

Չորրորդ - Որ ինչպես քո կամքը երկնքում է, ինչպես իր տեղը գրավողը իր տեղում է, թեպետև ամենուրեք է, այդպես էլ թող լինի կամքը, և նույն ժամանակում առաջանակ ու հաջողություն կատարում է առաջանակ առաջանակ կամքը:

Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր. գիտենք, որ հացը երկու տեսակ է, այսինքն՝ հոգևոր հաց և մարմնավոր հաց: Եվ երբ մարմնավոր հացն ենք խնդրում, ոչ միայն հացը, այլև մարմնական բոլոր կարիքները խնդրում ենք հացի հետ: Իսկ հոգևոր հացը բազում է, այսինքն՝ ուսումը, որ մտքի կերակուրն է և կենաց հացը, որ Տիրոջ մարմինն է, իսկ այս հացը հանապազորդ է կոչվում, որովհետև հավատացյալներն առաջալների ժամանակ ամեն օր հսդորդիւմ էին Տիրոջ մարմնից: Եվ հոգևոր ամեն ինչ խնդրում ենք այս հացի հետ: Իսկ այս խնդրանքը յոթը տեսակ մեղքեր է վերացնում մեզանից:

Նախ - Ավելորդն ու որկրամոլությունը, որ հաց ասելով ուռճանում են տեսակ-տեսակ խորտիկներով:

Երկրորդ - Երբ ասում են մեր հացը, վերացնում է ավազակորյունը, հափշտակությունը, անիրավությունը, գողությունն ու տոկոսառությունը, որոնք արդար չեն:

Երրորդ - Վերացնում է առանձին ուտելը և հրամայում է Աստծուց տրված հացը բոլորով ուտել, քանի որ չի ասում իմ հացը, այլ՝ մեր, որովհետև հարուստներն Աստծոն ձեռքերն են, նրանք պարտավոր են իրենց ունեցվածքը շատերին ու աղքատներին բաշխել:

Չորրորդ - Պետք չէ արժանիից ավելին խնդրենք, այսինքն՝ տոնիր ինձ կերակուր ոչ թե ինչպես բազավորներին և իշխաններին, այլ ինչ որ ինձ է արժանի. դրա համար ենք ասում մեր հացը:

Հինգերորդ - Որովհետև տուր ասելով վերացնում է դժգոհությունը. պետք չէ անգոհունակ լինել Աստծուց, որովհետև չենք ասում թե

Եվ հայտնի է, որ շատերը կան, որոնք մեկ օրվա հաց չեն ուտում, այլ տաս օրվա բավարար հացը մի օրում են ուտում, որի համար արդարադատ Աստված տասը օրը մեկ օրվա է կարծում: Այդպես էլ տաս տարվա կյանքը մեկ տարվա է կարծում, և այդպիսիների որդիները մուրում են, որովհետև նրանց կերակուրն իրենց հայրերը կերան: Եվ քանի որ մարդկանց խնդրանքներն երկուսն են, այսինքն՝ բարիքի հանդիպել և չարիքից փրկվել, արդ, որովհետև հանդիպեցինք հոգևոր ու մարմնավոր բարիքներին, խնդրենք և չարիքից փրկվել՝ ասելով. «Թող մեզ մեր պարտքերը, ինչպես և մենք ենք թողնում մեր պարտապաններին»:

Վարդապետներն ասում են, թե այս պարտքը մեղքն է, որ Սատանայից ենք փոխ առել և գրավ ենք դրել մեր հոգին: Եվ այս պարտքը տոկոսով է, որովհետև որչափ որևէ մեկը մահացու մեղքի մեջ երկար մնա, այնքան կավելանան նրա տանջանքները: Դրա համար ստիպված ենք խնդրել Աստծուց, որպեսզի ների մեր պարտքերը:

Երկրորդ - Որովհետև նախ պարտավոր ենք ներել նրանց պարտքերը, ովքեր մեզ են պարտը, և հետո մերը կներվի, որովհետև եթե մերը՝ մեր պարտքը, որ քիչ է, չենք ներում, Աստված էլ մերը՝ մեր ունեցած պարտքերը չի ների, որոնք բազմաթիվ են, որովհետև ասում է՝ «Խանարիսի թեզ, թե չխոնարիսի՝ ների՛ր նրան, որպեսզի դրա ազատվես»:

Երրորդ - Որովհետև սովորեցնում է մարդկանց հոգատարությամբ վարվել միմյանց հետ, այսինքն՝ հայրերը՝ որդիների, վարդապետները՝ աշակերտների, տերերը՝ ծառաների հետ, որովհետև թեպես

պարտք է մնում կամ աղերսանքով ներփում է: Այսպես էլ Քրիստոսը մեզ խոստացել է երկնքի արքայությունը, որ անգին է, և մենք Քրիստոսի համար քիչ ենք չարչարփում, որովհետև առաքյալն ասում է. «Այս ժամանակի չարչարանքները արժանի չեն բաղդատվելու գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեզ» (Հռոմեացիս 8.18), քանի որ քիչ չարչարփողները մեծ բարություններ կգտնեն: Եվ մենք պարտական ենք Քրիստոսին, որի համար և աղործում ենք աղերսանքով, որ ների մեզ: Մենք էլ այսպես պետք է անենք. եթե մի աղքատ իր կարիքների համար մեզնից ինչ որ բան վերցնի և ամբողջական գինը վճարել չկարողանա, պետք չէ արգելք լինել, այլ տալ և պակասը նվիրել: Բայց այստեղ հարց է լինում իր պարտականին՝ նոր մե՞նք է գործում, թե՞ ոչ: Երևում է, որ նոր մենք է գործում, որովհետև սուս ասելը մեղք է, և սուս ասողը Սատանայի որդի է, որովհետև ասում է՝ դու ինձ քող, ես էլ՝ իմին, բայց ինքը չի քողնում: Սակայն վարդապետներն ասում են, թե նոր մեղք չի գործում, որովհետև իր կողմից չի աղործում, այլ ընդհանուր Եկեղեցու կողմից, որովհետև ասում է, թե քող մեր պարտերը, դրա համար էլ նոր մեղք չի գործում, այլ իին մեղքը չի ներփում, որովհետև ասում է՝ քող այնպես, ինչպես իմին եմ քողնում:

Եվ իինգերող խոսքը. մեզ փորձության մի տաճիր:

Այս խոսքով շենք խնդրում, որ փորձությունները չգան, որովհետև փորձությունը մեծ օգուտ է հոգուն և պասկն է ավելացնում, ինչպես ասում է Հակոբոսը Ընդհանրական Ուղերձում. «Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձություններին, որովհետև եթե

մարմնով մենք չենք կարող փորձությունները տանել մինչև վերջ:
Դրա համար ասում ենք՝ «Մեզ փորձության մի տանիք»:

Յոթերորդ խնդրանքը, որ ասում է՝ Այլ փրկիր չարից, այսինքն՝
ամեն մի չարից:

Նախ - Սատանայից, որ ամենին անբարի է:

Երկրորդ - Չար մարդկանցից, որոնք Սատանայի արքանյակ-
ներն են, ինչպես ասում է՝ Դավիթը. «Փրկիր ինձ, Տե՛ր, չար մարդոց,
անիրավ մարդոց փրկիր ինձ» (Սաղմու 140.1):

Երրորդ - Աշխարհի ցանկություններից, որովհետև դրանք թշնա-
մություն են Աստծո նկատմամբ:

Չորրորդ - Չարի մեղերից, որոնց հավիտենական դարձանիչն
է:

Հինգերորդ - Դժոխքից, ինչպես ասում է մարգարեն. «Տե՛ր, իմ
անձը հանի՛ր բանտից» (Սաղմու 142.7):

Վեցերորդ - Չար մահից, ինչպես ասում է՝ Դավիթը. «Սեղավորի
մահը չար է» (Սաղմու 33.22):

Մրանից խնդրում ենք ազատվել:

Իսկ ամենը եզրակացությունն է, որպես թե ասենք՝ ով Տե՛ր
Հխոս, ինչ որ սովորեցրի մեզ աղոթել, ավարտեցինք, ինչ որ խնդ-
րում ենք Քեզնից, բռու լինի մեզ այս և հանդերձալ կյանքում:

Եվ պետք է իմանալ, որ առաջին երեք տեսակի խնդրանքներն
այս կյանքում չեն կատարվում, որովհետև այս կյանքում չի լինում
կատարյալ պրոտրյուն, երկնքի արքայությունը չկա այստեղ, մար-
դու և Աստծո կամքն այստեղ կատարելապես մեկ չի լինում, այլ՝
կամ այս պահում կամ այս պահում կամ այս պահում կամ այս պահում

Սեղնում ենք հպարտությունը և ապրեցնում խոնարհությունը:

Սեղնում ենք նախանձն ու ատելությունը և ապրեցնում սերը:

Սեղնում ենք բարկությունը և ապրեցնում համբերությունը:

Սեղնում ենք խռովությունը և ապրեցնում խաղաղությունը:

Սեղնում ենք ազահությունը և ապրեցնում ողորմածությունը:

Սեղնում ենք որկրամոլությունը և ապրեցնում

պարկեշտությունը:

Սեղնում ենք բղջախոհությունը և ապրեցնում

ողջախոհությունը:

Սեղնում ենք ծովությունը և ապրեցնում արիությունը:

Որովհետև այսպես անելով՝ ընդունելի է լինում մեր աղոքը, որ
ասում ենք Հայր մեր, որ... Որով և մեզ բոլորիս թող արժանի անի
Քրիստոս Աստված իր եղբայրությանը, երկնավոր Հոր որդիությա-
նը և բոլոր սրբերի հետ երկնքի արքայության ժառանգորդ լինելուն
հավիտյանս հավիտենից: Ամեն: